80 Կամավորական ջոկատները համապատասխանեցնել իրենց հրամանատարների, գործունեության հետ կապված վայրերի ու տարեթվերի հետ: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Ջոկատի համարը	N	Հրամանատարը	N	Վայրը	N	Տարեթիվը
1	Երրորդ	1	Դրո	1	Խնուս	1	1916 թ. փետրվարի 7
2	Առաջին	2	Համազասպ	2	Խիզան	2	1916 թ. մայիսի 15
3	Չորրորդ	3	Քեռի	3	Բիթլիս	3	1916 թ. հունվարի 13
4	Երկրորդ	4	Անդրանիկ	4	Ռևանդուզ	4	1916 թ. մարտի 11

1)

1	2	2	4
2	4	3	3
3	3	4	1
4	1	1	2

2)

1	3	4	2
2	1	3	1
3	2	2	4
4	4	1	3

3)

1	3	4	2
2	4	2	3
3	1	1	4
4	2	3	1

4)

1	2	2	4
2	4	3	1
3	3	4	2
4	1	1	3

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ են Արգիշտի Ի-ի զորքերը գրավել Կեխունի գավառը:

1) Ք.ա. 784 թ.
2) Ք.ա. 783 թ.
3) Ք.ա. 782 թ.
4) Ք.ա. 781 թ.

2 Ե՞րբ են հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի զորքերը Գանձակի մոտ ջախջախել պարսից Շապուհ արքայի ուժերին:

1) 371 թ.
2) 372 թ.
3) 370 թ.
4) 373 թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Սսի եկեղեցական ժողովը, որն ընդունել է հասարակության ամուսնա-ընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող կանոններ:

1) 1307 թ.
2) 1361 թ.
3) 1243 թ.
4) 1317 թ.

4 Ե՞րբ են Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակների դեմ համատեղ պայքարի մասին պայմանագիր կնքել Գանձակի մահմեդականների հետ:

1) 1725 թ.
2) 1723 թ.
3) 1724 թ.
4) 1726 թ.

5 Ե՞րբ է հիմնվել Երևանի նահանգը:

1) 1840 թ. ապրիլի 10-ին
2) 1836 թ. մարտի 11-ին
3) 1839 թ.
4) 1849 թ.

6 Ե՞րբ էր երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հաստատել արևմտահայերի ոչնչացման քաղաքական ուղեգիծը:

1) 1909 թ. ապրիլին
2) 1915 թ. ապրիլի 15-ին
3) 1910-1911 թթ.
4) 1894-1896 թթ.

78 Նշված պայմաններից ընտրել երեքը, որոնք ճիշտ են արտացոլում Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորման գործընթացը:

ա) Ադրբեջանի կոմկուսը դեմ էր խորհրդային հանրապետությունների միավորմանը և Անդրդաշնության ստեղծմանը:
բ) Վ. Լենինն առաջարկում էր հանրապետությունները միավորել՝ պահպանելով նրանց ինքնիշխանությունը և միությունից դուրս գալու իրավունքը:
գ) ԽՍՀՄ-ը գոյատևեց շուրջ 70 տարի և դարձավ իրական դաշնային, ժողովրդավարական միություն:
դ) Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Անդրդաշնության ստեղծումը համարում էր երկիրն ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու միջոց:
ե) Խորհրդային բոլոր հանրապետությունների կոմկուսները հավանության արժանացրին «ստալինյան ինքնավարացման ծրագիրը»:
զ) ԱԽՍՀՌՄ-ն (դաշնային միությունը) ԱԽՌՀ-ի (հանրապետության) վերածումով ազգությունների իրավունքներն ընդլայնվեցին:
է) Ի. Ստալինի նախագծի համաձայն՝ Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունները, Բելոռուսը և Ուկրաինան մտնելու էին ՌՍԴԽՀ-ի կազմի մեջ՝ ինքնավար հանրապետությունների կարգավիճակով:

1) բ, դ, ե
2) գ, զ, է
3) ա, ե, զ
4) բ, դ, է

79 Հեթանոսական դիցարանի աստվածներին համապատասխանեցնել նրանց բնորոշ պաշտամունքի և դրանց գլխավոր կենտրոնների հետ: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Աստվածները	N	Ինչի աստվածն է	N	Պաշտամունքի գլխավոր կենտրոնը
1	Արեգ-Միհր	1	Մայրության, պտղաբերության, արգասավորության	1	Տարոնի Աշտիշատ ավան
2	Տիր	2	Արևի, լույսի, կրակի և արդարության	2	Եկեղյաց գավառի Երիզա ավան
3	Նանե	3	Դպրության, գրի ու գրականության, արվեստի և գիտության հովանավոր	3	Դերջան գավառի Բագառիճ ավան
4	Անահիտ	4	Երկնային լույսի, սիրո և գեղեցկության	4	Եկեղյաց գավառի Թիլ ավան
		5	Ընտանեկան հովանավոր	5	Արտաշատի մոտ՝ Երազամույն վայր

1)

1	3	5
2	2	3
3	4	1
4	1	2

2)

1	3	5
2	2	3
3	1	4
4	4	1

3)

1	2	3
2	3	5
3	5	4
4	1	2

4)

1	2	3
2	3	1
3	5	4
4	4	2

76 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հայկական մարզի կազմավորումը:
բ) Ախուրյանի ափին՝ Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ ռուսական զորքերի տարած հաղթանակը Յուսուֆ փաշայի զորախմբի նկատմամբ:
գ) Թուրքմենչայի պայմանագիրը:
դ) Օշականի ճակատամարտը:
ե) Շամքորի ճակատամարտը:
զ) Թիֆլիսում, Ղարաբաղում և այլ վայրերում հայկական կամավորական գումարտակների կազմավորումը:
է) Ի. Գուդովիչի զորքերի կողմից Ախալքալաքի բերդի պաշարումը:
ը) Բայազետի պաշտպանությունը Պոպովի և Պանյուտինի գլխավորությամբ:
թ) Ի. Պասկևիչի զորքերի կողմից Ախալցխայի գրավումը:
ժ) Շուշիի ռուսական կայազորի և 1500 հայ աշխարհազորայինների ավելի քան մեկուկես ամսյա հերոսական դիմադրությունը պարսիկներին:

1) բ, է, ժ, զ, ե, դ, գ, ա, թ, ը
2) բ, է, զ, ե, դ, գ, ժ, թ, ը, ա
3) է, բ, ժ, ե, զ, դ, գ, ա, թ, ը
4) է, բ, ե, ժ, զ, դ, գ, թ, ը, ա

77 Բերված կետերից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բնութագրում հայկական մելիքությունները:

ա) Դատավարության համար մելիքներն առաջնորդվում էին հատուկ օրենսգրքերով:
բ) Մելիքները պարտավոր էին շահական գանձարան մուծել տարեկան հարկի այն քանակը, որը որոշված էր արքունիքի կողմից:
գ) Մելիքները որևէ մասնակցություն չէին ունենում հոգևոր գործերին:
դ) Մելիքները պարտավոր էին պատերազմի ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին:
ե) Մահացած մելիքի փոխարեն շահն իր հայեցողությամբ նշանակում էր նոր մելիք:
զ) Մելիքների զորքի հրամանատարներ նշանակվում էին մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները, որոնք կոչվում էին բեկ, հարյուրապետ և հազարապետ:
է) Մելիքների հողային ընդարձակ տիրույթներից ստացված եկամտի զգալի մասը մուծվում էր շահական գանձարան:

1) ա, ե, է
2) գ, դ, է
3) բ, դ, զ
4) բ, ե, զ

7 Ե՞րբ է արցախահայության 9-րդ համագումարը երկրամասը հռչակել Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս:

1) 1989 թ. դեկտեմբերի 1-ին
2) 1921 թ. հուլիսի 4-ին
3) 1920 թ. ապրիլի 25-ին
4) 1988 թ. փետրվարի 20-ին

8 Ե՞րբ է ստեղծվել ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը:

1) 1990 թ. դեկտեմբերին
2) 1990 թ. նոյեմբերի 15-ին
3) 1990 թ. օգոստոսի 23-ին
4) 1990 թ. օգոստոսի 4-ին

9 Որտեղի՞ց է սկիզբ առնում Արևմտյան Տիգրիսը:

1) Սրմանց լեռներից
2) Ծովք լճից
3) Ծաղկավետ լեռներից
4) Խաչափայտի լեռներից

10 Որտե՞ղ է Տրդատ Մեծը դիմավորել Սուրբ Գրիգորին:

1) Բագավանում
2) Մաժակում
3) Բագարանում
4) Աշտիշատում

11 Ներքոհիշյալ գործիչներից ո՞վ է ապրել հելլենիզի ժամանակաշրջանում:

1) Սպարապետ Գիսակ Դիմաքսյանը
2) Հայաստանի արևմտյան մասի կառավարիչ Տիրիբազը
3) Ծագումով հայ զորավար Դադարշիշը
4) Հայոց արքա Տիգրան Երվանդյանը

12 Ո՞ր եկեղեցական ժողովն է անդրադարձել հայկական օրացույցի խնդրին:

1) Հովսեփ Ա Վայոցձորցու գումարած Շահապիվանի
2) Բաբկեն Ա-ի գումարած Դվինի
3) Ներսես Բ Բագրևանդցու գումարած Դվինի
4) Ներսես Ա-ի գումարած Աշտիշատի

13 Ո՞վ է 1829 թ. հունիսի 27-ին Էրզրումում դիմավորել ռուսական զորքերին:

1) Ներսես Աշտարակեցին
2) Կարապետ արքեպիսկոպոսը
3) Վանահայր Հովնանը
4) Դավիթ եպիսկոպոսը

14 Ո՞վ **չի** մասնակցել Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությանը:

1) Կարապետ Բասիլոսյանը
2) Նազարեթ Չավուշը
3) Մկրտիչ Յաղուբյանը
4) Կարապետ Թուր-Սարգսյանը

15 Ո՞վ է Ախալցխայի 1918 թ. ինքնապաշտպանության ղեկավարը:

1) Վասիլ Բեհբութովը
2) Արմենակ Եկարյանը
3) Զորի Զորյանը
4) Խաչատուր Ամիրյանը

16 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում քաղաքական ի՞նչ դաշինք ձևավորվեց:

1) «Հանրապետություն»
2) «Միասնություն»
3) «Ժառանգություն»
4) «Հայ ազգային կոնգրես»

17 Ի՞նչ անուն էին կրում մոնղոլական զորաջոկատների հրամանատարները:

1) խան
2) նոյոն
3) ամիրա
4) բեկ

18 Ինչպե՞ս էին կոչվում քրդական այն ջոկատները, որոնց կազմում հանդես էին գալիս 1880-ական թթ. կեսերին օսմանյան տիրապետության դեմ պայքարում իրենց քրդեր ներկայացնող հայ մարտիկները:

1) ֆիդայիներ
2) համիդիե
3) չելլոներ
4) չերքեզներ

19 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Արգիշտի Ի-ի հասնելը Հյուսիսային ծովակի ավազան:
բ) Զագրոսյան լեռներով Արգիշտի Ի-ի զորքերի հասնելը մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր:
գ) Արդինի-Մուսասիր երկրի միացվելը Վանի թագավորությանը:
դ) Վանի թագավորության սահմանների հասնելը Միջերկրական ծովի արևելյան ավազան:

1) գ, ա, բ, դ
2) դ, ա, գ, բ
3) դ, գ, ա, բ
4) գ, բ, ա, դ

74 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բացատրում զանգվածային հայրենադարձության վերաբերյալ դաշնակցություն կուսակցության ունեցած մտահոգություններն ու տագնապները:
Ներգաղթի հետևանքով…

ա) կվնասվեին խոշոր և կայացած գաղթօջախները:
բ) Խորհրդային Հայաստանում կաճեր հայ բնակչության թիվը, և կթուլանային դաշնակցության դիրքերը:
գ) ՀԽՍՀ-ն կդառնար Հայ դատի և պահանջատիրության միակ արծարծողը:
դ) թուլացած սփյուռքահայ գաղթօջախներն ի վիճակի չէին լինի հետապնդել Հայ դատի՝ հայության համար կենսական խնդիրը:
ե) ԽՍՀՄ-ն այլևս հանդես չէր գա Թուրքիայից հայկական հողերի վերադարձման պահանջով:
զ) հայրենադարձները կարող էին ենթարկվել վերսկսված ստալինյան բռնություններին:

1) գ, դ, ե
2) ա, դ, զ
3) բ, գ, դ
4) ա, ե, զ

75 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Կարնո գավառի Արծաթի գյուղի մոտ պարսից զորագնդի նկատմամբ հայերի տարած հաղթանակը:
բ) Պարսկաստանում գերության մեջ գտնվող հայ նախարարների վերադարձը հայրենիք Պերոզի գահակալության շրջանում:
գ) Վահանանց պատերազմի ժամանակ Դիմաքսյան և Սահառունի նախարարների զոհվելը:
դ) Հազկերտ II արքայի պահանջով հայ նախարարների ժամանումը Տիզբոն:
ե) Ճարմանայի ճակատամարտը:
զ) Արևելյան Հայաստանում Սահակ Բագրատունի ասպետի գլխավորությամբ կառավարության կազմումը:
է) Վարդան Մամիկոնյանի զորագնդի հաղթական երթը դեպի Ճորա պահակ:
ը) Վահան Մամիկոնյանի զորքի ժամանումը Ծաղկոտն գավառի Վարշակի Ջերմուկների հանգստավայր:
թ) Ներսեհապատի ճակատամարտը:
ժ) Խաղխաղի ճակատամարտը:

1) ժ, դ, է, զ, բ, ը, թ, ե, գ, ա
2) դ, ժ, է, բ, զ, թ, ը, ե, գ, ա
3) դ, ժ, է, բ, թ, զ, ե, ը, ա, գ
4) ժ, դ, զ, է, ը, թ, բ, ե, ա, գ

72 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բացատրում 1465 թ. Աղթամարում հայոց թագավորության հռչակման նախադրյալները:

ա) Օսմանյան կայսրությունն օժանդակություն էր ցուցաբերում հայ իշխանական տների շառավիղներին մահմեդական իշխանությունների դեմ պայքարում:
բ) Հայաստան մուտք գործած և իրենց տիրապետությունը երկրում ամրապնդելու համար միմյանց միջև անզիջում պայքար ծավալած քոչվորական ցեղերը ստիպված էին համագործակցել հայերի հետ:
գ) Զաքարիա և Ստեփանոս Աղթամարցի կաթողիկոսներն օգնության խոստումներ էին ստացել Հռոմի պապից:
դ) Աղթամարի կաթողիկոսական գահին տիրած և Արծրունյաց թագավորական տոհմից սերած կաթողիկոսները հավակնում էին Ամենայն հայոց կաթողիկոսի գահին և փորձում վերականգնել թագավորությունը Վասպուրականում:
ե) Հայոց պետականության վերականգնման ձգտումը կենդանի էր հայ իշխանական տների շառավիղների մոտ:
զ) Այդ ժամանակ հզորացել էր հարևան քրիստոնյա Վրաստանը և ամրապնդվել էր հայ-վրացական զինակցությունը:
է) Եվրոպական քրիստոնյա երկրները նոր խաչակրաց արշավանք էին սկսել մահմեդականների դեմ:

1) բ, դ, ե
2) բ, ե, զ
3) ա, գ, է
4) դ, ե, զ

73 Բերված պնդումներից առանձնացնել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Արևմտյան Հայաստանում հայդուկային շարժման ծավալման պատճառները:

ա) Աննախադեպ չափերի էին հասել արևմտահայության նկատմամբ քաղաքական հալածանքները:
բ) Այսրկովկասից վրեժխնդրական պայքարի գործելակերպը ներմուծվել էր Արևմտյան Հայաստան:
գ) Նոր թափ էր ստացել արևմտահայության հողազրկումը:
դ) Եվրոպական երկրները խրախուսում էին հայերի անհատական-պարտիզանական, վրեժխնդրական ընդվզումները:
ե) Օսմանյան կառավարությունը վարում էր երկրից հայերին դուրս մղելու և այն մահմեդականներով բնակեցնելու քաղաքականություն:
զ) Թուրքահպատակ սլավոնական ժողովուրդները խոստացել էին համատեղ պայքար սկսել օսմանյան լծից ազատագրվելու համար:
է) Կայսրությունում լայն թափ էր ստացել թուրք ընդդիմադիր ուժերի հակասուլթանական շարժումը:

1) ա, գ, դ
2) բ, դ, զ
3) գ, ե, է
4) ա, գ, ե

20 VII դարի հայ գործիչների անունները դասավորել ըստ նրանց կառավարման հաջորդականության:

ա) Ներսեհ Կամսարական
բ) Թեոդորոս Ռշտունի
գ) Դավիթ Սահառունի
դ) Գրիգոր Մամիկոնյան

1) գ, բ, ա, դ
2) բ, դ, ա, գ,
3) գ, բ, դ, ա
4) բ, գ, դ, ա

21 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Աղաբաբյան դպրոցի բացումը Աստրախանում:
բ) Համբարձում Լիմոնճյանի կողմից հայկական նոր ձայնագրության ստեղծումը:
գ) Լոռիի, Փամբակի և Շամշադինի անցնելը Ռուսաստանի տիրապետության տակ:
դ) «Տարեգրություն» պարբերականի հրատարակման սկիզբը:

1) դ, գ, ա, բ
2) դ, գ, բ, ա
3) գ, դ, ա, բ
4) գ, բ, դ, ա

22 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Թիֆլիսի մամուլում Հայաստանի անկախության հռչակման մասին Հայոց ազգային խորհրդի կոչի հրապարակումը:
բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը:
գ) Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ՀՀ անկախության հռչակումը:
դ) Հայոց ազգային խորհրդում անկախության խնդրի և թուրքերի կողմից ներկայացված վերջնագրի քննարկումը:

1) դ, ա, գ, բ
2) դ, ա, բ, գ
3) ա, դ, գ, բ
4) ա, բ, դ, գ

23 Ե՞րբ է Արտաշես Ի-ը հրապարակել հրամանագիր հողային բարեփոխման վերաբերյալ:

1) Ք. ա. 185 թ.
2) Ք. ա. 180 թ.
3) Ք. ա. 183 թ.
4) Ք. ա. 188 թ.

24 Ե՞րբ է կառավարել Կիլիկիայի իշխան Թորոս II-ը:

1) 1129 - 1237 թթ.
2) 1100 - 1129 թթ.
3) 1145 - 1169 թթ.
4) 1089 - 1125 թթ.

25 Ե՞րբ է ընդունվել հայոց պետականության պատմության մեջ առաջին սահմանադրությունը:

1) 1922 թ. փետրվարի 3-ին
2) 1863 թ. մարտի 17-ին
3) 18-րդ դարի վերջին
4) 1995 թ. հուլիսի 5-ին

26 Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը:

1) 1958 թ.
2) 1967 թ.
3) 1962 թ.
4) 1956 թ.

27 Ո՞րն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը:

1) Թմուկ (Թմկա) բերդը
2) Ամբերդ ամրոցը
3) Գագ ամրոցը
4) Լոռի (Լոռե) բերդը

28 Ստորև նշված պայմաններից ո՞րն էր նախատեսվում 652 թ. հայ-արաբական պայմանագրով:

1) Հայաստանը ծանր հարկման էր ենթարկվում:
2) Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան հայերը կամենային:
3) Հայոց 15-հազարանոց այրուձին այլ տեղերում գործելու իրավունք չուներ և մնալու էր Հայաստանում:
4) Հայաստանում տեղակայվելու էին արաբական զորքեր:

29 Անիի Բագրատունյաց ո՞ր թագավորի գահակալության շրջանում են առաջացել երկու ենթակա թագավորություններ:

1) Աշոտ Ողորմածի
2) Սմբատ II-ի
3) Հովհաննես-Սմբատի
4) Սմբատ I-ի

30 Ստորև նշված դիվիզիաներից ո՞րի անձնակազմում հայերը մեծամասնություն **չէին** կազմում:

1) 138-րդ
2) 390-րդ
3) 406-րդ
4) 349-րդ

70 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. պարոնտեր
2. սատրապ
3. հյուպարքոս
4. շահապ
5. մուհթասիբ

ա) Աքեմենյան դարաշրջանում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը:
բ) Սեփական կալվածքներն ու տիրույթները եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատեր:
գ) Բագրատունիների օրոք հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյա:
դ) Արտաշես I-ի օրոք Մեծ Հայքի գավառների կառավարիչ:
ե) Հայաստանի կառավարիչը Աքեմենյան տերության կազմում գտնվելու շրջանում:
զ) Միջնադարյան Հայաստանում քաղաքի կառավարիչը՝ քաղաքապետը:

1) 1-զ, 2-ա, 3-ե, 4-գ 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-ե, 4-զ, 5-գ
3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-գ
4) 1-զ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ

71 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
2. «Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ»
3. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
4. «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն»

ա) Արցախյան պատերազմի շրջանում ԼՂՀ-ում Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ ստեղծված պետական իշխանության մարմին:
բ) Արցախահայության առաջին համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին:
գ) Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից երկրամասում գործող մարմին:
դ) Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը:
ե) ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին:

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ

67 Իրադարձությունը համապատասխանեցնել դրա հետ անմիջականորեն առնչվող հայոց կաթողիկոսի հետ:

1. Սիսում եկեղեցական ժողովի հրավիրումը և Սիսի ու Ադանայի նախորդ ժողովների որոշումների չեղյալ հայտարարումը:
2. Կիլիկիայի թագավորության անկումը:
3. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը էջմիածնում:
4. Լևոն II իշխանի օծումը հայոց թագավոր:
5. «Պատմություն Հայոց» աշխատության շարադրումը:
6. Սեբաստիա քաղաքում հրավիրված եկեղեցական գաղտնի ժողովի անունից պատվիրակության ուղարկումը Վենետիկ:

ա) Պողոս Սսեցի
բ) Գրիգոր Զ Ապիրատ
գ) Միքայել Սեբաստացի
դ) Մեսրոպ Արտազեցի
ե) Կոստանդին Կեսարացի
զ) Կիրակոս Վիրապեցի
է) Հովհաննես Դրասխանակերտցի

1) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-ե, 6-գ
2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ, 5-է, 6-զ
3) 1-ե, 2-բ, 3-է, 4-դ, 5-ա, 6-զ
4) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-է, 6-գ

68 Ինքնապաշտպանությունը համապատասխանեցնել դրա հետ կապված գործչի հետ:

1. Շապին-Գարահիսարի
2. Շատախի
3. Ուրֆայի
4. Հաճնի
5. Վանի Քաղաքամեջ թաղամասի
6. Մուսա լեռան (Սուետիա)

ա) Բաղդիկ Սիմոնյան
բ) Ղուկաս Տեովլեթյան
գ) Տիգրան Անդրեասյան
դ) Հակոբ Կոտոյան
ե) Պետրոս Սարաճյան
զ) Հայկակ Կոսոյան
է) Մկրտիչ Յոթնեղբայրյան

1) 1-գ, 2-ա, 3-է, 4-ե, 5-դ, 6-բ
2) 1-բ, 2-ա, 3-է, 4-ե, 5-զ, 6-գ
3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-զ, 6-գ
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-զ, 6-է

69 Մշակութային իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվի հետ:

1. Ա. Խարազյանի ղեկավարությամբ պետական շրջիկ թատրոնի ստեղծումը:
2. Հայկինոյի համր շրջանի ավարտը:
3. Գրական խմբակների միավորումը Հայաստանի գրողների միության մեջ:
4. Պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը:
5. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը:
6. Ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը:

ա) 1929 թ.
բ) 1935 թ.
գ) 1938 թ.
դ) 1928 թ.
ե) 1937 թ.
զ) 1932 թ.
է) 1934 թ.

1) 1-դ, 2-է, 3-զ, 4-ե, 5-բ, 6-ա
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-զ, 6-դ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-գ, 6-դ
4) 1-դ, 2-է, 3-զ, 4-ա, 5-գ, 6-ե

31 Ստորև բերված հասկացություններից ո՞րն է պետական իշխանության մարմին:

1) Հայրենիքի փրկության կոմիտե
2) Հայաստանի օգնության կոմիտե
3) Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտե
4) Հայկական ազգային կոմիտե

32 Ովքե՞ր էին այլախոհները:
ԽՍՀՄ-ում 1960-ական թվականներից այդպես անվանում էին նրանց ովքեր…

1) ուժային միջոցներով պայքարում էին խորհրդային իշխանության դեմ:
2) ընտրել էին գաղափարական պայքարի միջոցով խորհրդային իրականությունը փոփոխելու ուղին:
3) փորձում էին հասնել մարքս-լենինյան գաղափարախոսության ազատականացմանը:
4) ձգտում էին ամրապնդել խորհրդային կարգերը:

33 Ինչու՞ երկիրը միավորելու և կենտրոնացված պետություն ստեղծելու Բագրատունիների ջանքերը ցանկալի արդյունք չտվեցին:

1) Հայաստանում առկա չէին տնտեսական զարգացման գործոնը և այլ հանգամանքներ:
2) Բյուզանդական կայսրությունը վարում էր հայկական տարածքները զավթելու և հայոց թագավորությունը վերացնելու քաղաքականություն:
3) Արաբական խալիֆայությունը ջանքեր էր գործադրում Հայաստանն իր կազմում պահելու համար:
4) Բագրատունի թագավորները պայքար չէին մղում կենտրոնախույս ուժերի դեմ:

34 Ինչու՞ 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընդունած անկախության վերականգնման հռչակագրով Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը չէին կարող լինել Ադրբեջանի կազմում:
Որովհետև…

1) հռչակագրում չէր ասված, որ վերոհիշյալ տարածքներն Ադրբեջանի մաս են:
2) դրանք փաստորեն չէին եղել Խորհրդային Ադրբեջանի կազմում:
3) անկախությունը հռչակվում էր 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի սահմաններում, որի կազմում չէին եղել այդ տարածքները:
4) Լեռնային Ղարաբաղն արդեն հռչակել էր իր անկախությունը:

35 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Առաքելոց վանքի կռիվը:
բ) Մարաշի փաշայի կողմից Պապիկ իշխանին Զեյթունի քաղաքագլուխ ճանաչելը:
գ) Թորգոմի «Մրրիկ» ձիավոր խմբի մուտքը Սասուն:
դ) «Կոտորածի ձորում» թուրքերի դեմ զեյթունցիների տարած հաղթանակը:
ե) Զեյթունցիների կողմից զորանոցի վրա ապստամբների՝ «Զեյթունի անկախ իշխանություն» վերտառությամբ դրոշի պարզումը:

1) դ, բ, ե, ա, գ
2) դ, ե, բ, գ, ա
3) բ, դ, ե, ա, գ
4) բ, ե, դ, գ, ա

36 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) ԼՂՀ զինանշանի և օրհներգի հաստատումը:
բ) ՀՀ անդամակցությունը Միավորված ազգերի կազմակերպությանը:
գ) «Հարսանիք լեռներում» գործողության իրականացման որոշումը:
դ) Բարեփոխված ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ հանրաքվեի անցկացման որոշումը:
ե) Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը:

1) ե, բ, դ, ա, գ
2) դ, ե, ա, բ, գ
3) ե, դ, բ, գ, ա
4) դ, ե, բ, գ, ա

37 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:

Ո՞վ է վերոհիշյալ խոսքերի հեղինակը.

1) Պարսից արքա Խոսրով I Անուշիրվանը
2) Բյուզանդական կայսր Հերակլ II-ը
3) Պարսից արքա Խոսրով II-ը
4) Բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ը

38 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Բարձրյալն Աստված թող... ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր ազգին: ...Հույս ու հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը»:

Ո՞վ էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին ուղղված՝ վերը բերված նամակի հեղինակը.

1) Եսայի Հասան-Ջալալյանը
2) Խաչատուր Գաղատացին
3) Հովհաննես Թութունջին
4) Հակոբ Ջուղայեցին

39 Անձնանունները համապատասխանեցնել իրենց անունից ծագած տեղանուններին:

1. Արամ նահապետ	ա) Արագածոտն
2. Արամանյակ	բ) Հայաստան
3. Հայկ	գ) Արատտա
4. Արամայիս	դ) Արմենիա
	ե) Արմավիր

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա
3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե

64 Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրում:

ա) Համիդիե զորագնդերը լուծարվելու էին:
բ) Յոթ նահանգներից ձևավորվում էին երկու վարչական միավորներ՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր կազմով:
գ) Վարչական միավորների օտարերկրյա տեսուչներն իրավունք ունեին պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին:
դ) Խաղաղ ժամանակ թույլատրվում էր զինվորական ծառայություն կատարել բնակության վայրից դուրս:
ե) Հողային հարցերը պետք է վճռվեին տեսուչի անմիջական վերահսկողությամբ:

1) բ, դ, ե
2) ա, դ, ե
3) բ, գ, ե
4) ա, բ, գ

65 Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:

ա) Լոնդոնի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը մերժեց հայերի համար «ազգային օջախ» ստեղծելու առաջարկը:
բ) 1921 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի ընդունած որոշումով հայերի համար պետք է ստեղծվեր «ազգային օջախ»:
գ) 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով խորհրդային իշխանությունը, ըստ էության, հրաժարվեց Հայկական հարցից:
դ) Լոզանի կոնֆերանսը քննարկեց և մերժեց՝ Սևրի պայմանագիրը գործադրելու մասին հայկական պատվիրակության առաջարկը:
ե) 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրով Կիլիկիան հանձնվում էր Թուրքիային:

1) ա, բ, դ
2) բ, գ, ե
3) գ, դ, ե
4) ա, բ, գ

66 Կատարել համապատասխանեցում:

1. Ստեփանոս Ասողիկ	ա) «Արծրունիների տան պատմություն»
2. Կիրակոս Գանձակեցի	բ) «Ժամանակագրություն»
3. Սմբատ Գունդստաբլ	գ) «Տիեզերական պատմություն»
4. Ներսես Շնորհալի	դ) «Տարեգիրք»
5. Գրիգոր Դարանաղցի	ե) «Պատմություն»
6. Առաքել Դավրիժեցի	զ) «Թուղթ ընդհանրական»
	է) «Հայոց պատմություն»

1) 1-գ, 2-է, 3-դ, 4-զ, 5-բ, 6-ե
2) 1-բ, 2-գ, 3-զ, 4-դ, 5-ա, 6-է
3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-զ, 5-բ, 6-է
4) 1-բ, 2-է, 3-զ, 4-դ, 5-ա, 6-ե

61 Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի հաջորդականությունը:

ա) Պարսից արքայի կողմից հայ Արշակունիների տոհմից Խոսրովին Հայաստան ուղարկելը:
բ) Արշակ III-ի մահը:
գ) Վռամշապուհի գահակալության սկիզբը:
դ) Հազկերտ I-ի կողմից Խոսրով IV-ի հաստատումը հայոց գահին:
ե) Սահակ Պարթևի նշանակվելը հայոց կաթողիկոս:
զ) Հայաստանի արևմտյան մասում Մեսրոպ Մաշտոցի կողմից դպրոցների բացումը:

1) գ
2) դ
3) ե
4) բ

62 Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի հաջորդականությունը:

ա) Արածանիի ճակատամարտը:
բ) Ձելայի ճակատամարտը:
գ) Փրաասպայի մոտ հռոմեական զորքերի կրած ծանր պարտությունը:
դ) Տիգրան Մեծի և Գնեոս Պոմպեոսի միջև Արտաշատի պայմանագրի կնքումը:
ե) Պարթևների թագավոր Հրահատ III-ի զորքերի ներխուժումը Հայաստան և Արտաշատի պաշարումը:
զ) Անտոնիոսի 60-հազարանոց բանակի արշավանքը Հայաստան:

1) դ, զ
2) բ, գ
3) գ, զ
4) դ, ե

63 Բերված պնդումներից որո՞նք են **սխալ:**

ա) Տիգրան Երվանդյանի և Աժդահակի վեպն առասպելախառն հիշողություն է հայերի ու մարերի փոխհարաբերությունների մասին:
բ) Տորք աստծո պաշտամունքը տարածված է եղել միջինասիական մի շարք ժողովուրդների շրջանում:
գ) IV-V դարերից սկսած՝ հայկական քրիստոնեական մշակույթն ավելի հաղորդակից դարձավ արևմտաեվրոպական քրիստոնեական աշխարհի մշակույթին:
դ) Տարբեր երկրների հելլենիստական մշակույթների տարբերությունը պայմանավորված է երկու մշակութային շերտերի համաձուլվածք լինելով:
ե) Ք. ա. III-II դարերում Դարանաղյաց գավառի Անի ամրոցում գոյություն է ունեցել մեհենական պատմագրության արխիվ, որից ասորի մատենագիր Բարդածանը թարգմանություններ է կատարել ասորերեն ու հունարեն:

1) ա, բ, ե
2) բ, գ, ե
3) բ, գ, դ
4) գ, դ, ե

40 Մշակույթի գործչին համապատասխանեցնել իր գործունեության հետ կապված իրադարձությանը:

1. Տիգրան Չուխաջյան	ա) Սիմֆոնիկ նվագախմբի ստեղծում և ղեկավարում:
2. Խորեն Սինանյան	բ) Առաջին հայ կամերային նվագախմբի ստեղծում:
3. Պետրոս Մաղաքյան	գ) Առաջին մշտական հայ թատերախմբի ստեղծում:
4. Գրիգոր Սինանյան	դ) Յուպիտերի վեցերորդ արբանյակի հայտնաբերում:
	ե) Հայ օպերային արվեստի հիմնադրում:

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
3) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ

41 Ի՞նչ էր նախատեսվում Հերթ ոստիկանի «աշխարհագրով»:

1) Հայ հոգևորականությունն ազատվում էր հարկերից:
2) Ոչ մահմեդականներից գանձվող ծխահարկը փոխարինվում էր գլխահարկով:
3) Մահմեդականների կողմից վճարվող հողահարկին գումարվում էին նորերը:
4) Ոչ մահմեդական հարկատու ընտանիքը պարտավոր էր հարկի փոխարեն արաբներին հանձնել ընտանիքի անդամներին:

42 Բերված պնդումներից ո՞րն է ճիշտ բնութագրում ՀՅԴ կուսակցության ընտրած կազմակերպական ձևի ապակենտրոն սկզբունքը:
Տարբեր վայրերի կազմակերպական կառույցները…

1) իրենց գործունեությունը պետք է համաձայնեցնեին կենտրոնական մարմնի հետ՝ իրավիճակին համապատասխան:
2) պիտի պարտադիր կատարեին կենտրոնական մարմնի որոշումները՝ գաղափարական հարցերում պահպանելով իրենց ինքնուրույնությունը:
3) տեղերից պիտի հանդես գային կուսակցության շարքերն ամրապնդելու և այլ օգտակար առաջարկություններով:
4) պիտի ունենային իրավիճակին համապատասխան գործելու ազատություն և կենտրոնացված սկզբունքով գործեին միայն գաղափարական հարցերում:

43 Ինչու՞ 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո արևմտահայ զինուժի ստեղծման հարցում Կովկասյան ռազմաճակատի ռուսական հրամանատարությունը դրական վերաբերմունք ունեցավ:
Որովհետև…

1) նպատակ ուներ Արևմտյան Հայաստանում ստեղծել հայկական ինքնավարություն:
2) ձգտում էր Կովկասյան ռուսական բանակը համալրել նոր զինական ուժերով:
3) փորձում էր հայերի օժանդակությամբ պահպանել երեքամյա պատերազմում ռուսական զորքերի նվաճած բնագծերը Արևմտյան Հայաստանում:
4) ծրագիր ուներ ռուս-թուրքական առճակատումը վերածել հայ-թուրքականի:

44 Ի՞նչ նպատակով ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունը որոշեց անցնել արդյունաբերացման (ինդուստրացման) քաղաքականության:
Դրանով նպատակ էր դրվում…

1) հրաժարվել նոր տնտեսական քաղաքականությունից:
2) արագորեն վերացնել երկրի տեխնիկատնտեսական հետամնացությունը:
3) ավարտին հասցնել պատերազմից քայքայված երկրի տնտեսության վերականգնումը:
4) հասնել երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի համեմատությամբ գյուղատնտեսականի գերազանցությանը:

45 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հովհաննավանքի դպրոցի փոխադրումը Էջմիածին:
բ) Շահ Աբաս I-ի գահակալության ավարտը:
գ) Հարանց անապատի դպրոցի հիմնադրումը:
դ) Օսմանյան բանակի կողմից Բաղդադի գրավումը:
ե) Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցի հիմնադրումը:

1) ե, բ, ա, գ, դ
2) գ, ա, ե, դ, բ
3) գ, ա, բ, ե, դ
4) ե, գ, բ, ա, դ

46 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Դրոյի և Նժդեհի ջոկատների մուտքը Արցախ:
բ) Շուշիի հայերի կոտորածը և հայկական թաղամասերի հրկիզումը:
գ) ԱՄՆ-ի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումը:
դ) «Թուրքական ազգային ուխտի» ընդունումը:
ե) Քեմալական զորքերի ներխուժումը Մարաշ:

1) ե, դ, բ, գ, ա
2) դ, ե, գ, բ, ա
3) ե, դ, բ, ա, գ
4) դ, բ, ե, ա, գ

47 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու… և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

Ո՞վ է վերոհիշյալ խոսքերի հեղինակը.

1) Հերոդոտոսը
2) Մովսես Խորենացին
3) Քսենոփոնը
4) Օղյումպ քուրմը

58 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են արտացոլում Բեռլինի վեհաժողովից հայերի հիասթափության պատճառները:

ա) Քանի որ Ռուսաստանն իր զորքերն անհապաղ դուրս էր բերելու գրաված տարածքներից, ոչ մի երաշխիք չէր մնում բարեփոխումների կենսագործման համար:
բ) Թուրքական կառավարությունը պարտավորվում էր ապահովել հայերի անվտանգությունը:
գ) Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի գավառներն անցնում էին Ռուսաստանին:
դ) Հայաստան հասկացությունը փոխարինվում էր հայաբնակ մարզեր բառակապակցությամբ:
ե) Բարեփոխումների իրագործման հսկողության փոխանցումը վեհաժողովին մասնակցած պետություններին հնարավորություն էր տալիս վերջիններիս միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:
զ) Հայաստանի ինքնավարության ծրագիրը լիովին մերժվում էր:

1) ա, ե, զ
2) ա, գ, դ
3) բ, գ, ե
4) ա, դ, զ

59 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Բաբը Ալիի ցույցի կազմակերպումը:
բ) Համիդիե հեծելագնդերի ստեղծումը:
գ) Սարգիս Կուկունյանի հայդուկ-կամավորների կողմից ռուս-թուրքական սահմանի անցումը:
դ) «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության ստեղծումը:
ե) «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի հանձնումը սուլթանին:
զ) Հնչակյան կուսակցության պառակտումը:

1) դ, գ, բ, ա, զ, ե
2) դ, գ, բ, ե, ա, զ
3) գ, դ, բ, ե, ա, զ
4) գ, դ, ե, բ, զ, ա

60 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին:
բ) ԽՍՀՄ կառավարության և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը հայրենադարձների կյանքի պայմանները բարելավելու մասին:
գ) Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի սպանությունը:
դ) Երևանի արհեստական կաուչուկի գործարանի շահագործման հանձնվելը:
ե) Խորհրդաֆիննական պատերազմի սկիզբը:
զ) Հայաստանի Ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի մահը:

1) զ, բ, գ, ա, դ, ե
2) բ, գ, ա, զ, դ, ե
3) զ, բ, ա, գ, ե, դ
4) բ, զ, գ, ա, ե, դ

56 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի միջև կնքված դաշինքի պատճառները:

ա) Մեծ Հայքը Պոնտոսի օժանդակությամբ հնարավորություն կստանար լուծելու Հռոմի հետ ունեցած վիճելի հարցերը:
բ) Փոքր Ասիայի բոլոր երկրները գրավելու և հելլենիստական մեծ պետություն ստեղծելու համար Միհրդատին անհրաժեշտ էր Մեծ Հայքի աջակցությունը:
գ) Տիգրան Մեծը Պոնտոսից կստանար Փոքր Հայքը:
դ) Միհրդատ Պոնտացու հետ դաշինքը կնպաստեր Մեծ Հայքի աշխարհակալական ծրագրերի իրագործմանը:
ե) Կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն կստանար գործողությունների ազատություն ստանալ. Հայաստանը՝ հյուսիսում, հարավում և արևելքում, Պոնտոսը՝ արևմուտքում:
զ) Հայաստանը Պոնտոսի օգնությամբ իրեն կմիացներ Ծոփքը:

1) ա, դ, զ
2) բ, դ, ե
3) ա, բ, դ
4) բ, գ, ե

57 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բացատրում այն նպատակները, որ ուներ շահ Աբասը հայերի բռնագաղթն իրականացնելիս:
Այն շահ Աբասին հնարավորություն կտար…

ա) արշավող օսմանյան բանակին զրկել պարենից ու օթևանից և արշավանքը շարունակելու հնարավորությունից:
բ) ամայացնելով Արևելյան Հայաստանը՝ լուրջ քաղաքական ու տնտեսական հարված հասցնել հակառակորդ Հայաստանին:
գ) բռնագաղթի ենթարկված որակյալ հայ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով Իրանի ներքին գավառներում, զարկ տալ իր երկրի տնտեսության զարգացմանը:
դ) բացառել Օսմանյան կայսրության հետ համագործակցելու հայ ազատագրական պայքարի գործիչների ձգտումները:
ե) իրագործել հայ հարուստ վաճառականական դաս ստեղծելու իր վաղեմի ծրագիրը:
զ) հայ վաճառականությանը տեղափոխելով Իրանի հարավային նահանգներ՝ հյուսիսային մասերում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել Պարսից ծոցի շրջան և դրանով մեծ վնաս հասցնել Օսմանյան կայսրությանը:

1) ա, գ, զ
2) ա, բ, զ
3) գ, դ, ե
4) բ, գ, դ

48 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Թվում էր, թե մի նոր ոգի է թևածում բոլոր հայերի մեջ, որոնք հույս ունեին վերականգնված տեսնելու իրենց թագավորությունը»:

Ռուս գործիչներից ո՞ւմ են պատկանում վերոհիշյալ խոսքերը.

1) Ա. Գրիբոյեդովին
2) Ա. Կրասովսկուն
3) Ա. Պուշկինին
4) Ն. Մուրավյովին

49 Ազգային գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոններին:

1. Վահան Փափազյան	ա) Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ
2. Հակոբ Զավրյան	բ) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ
3. Սամսոն Հարությունյան	գ) Հայոց ազգային պատվիրակության նախագահ
4. Ավետիս Ահարոնյան	դ) Հայոց ազգային բյուրոյի նախագահ
	ե) Հայոց ազգային խորհրդի նախագահ

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ

50 Կինոնկարները համապատասխանեցնել դրանց ռեժիսորների հետ:

1. «Նահապետը»	ա) Էդմոնդ Քեոսյան
2. «Երկունք»	բ) Ֆրունզե Դովլաթյան
3. «Ոսկե ցլիկ»	գ) Հենրիկ Մալյան
4. «Հարսնացուն հյուսիսից»	դ) Մոկո Հակոբյան
	ե) Ներսես Հովհաննիսյան

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե
4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

Բ մակարդակ

51 Նշված պնդումներից ո՞րը **ճիշտ չէ**:

1) Դիաուխիի շուրջ կազմավորված համադաշնությունը զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջանները:
2) Էթիունի երկրի համադաշնությունը տարածվում էր Սևանա լճի ավազանում, Արարատյան դաշտում, Սյունիքում և հարակից շրջաններում:
3) Սարդուրի I-ի օրոք Վանի թագավորության կազմի մեջ մտնում էին Վանա լճի ավազանի և Հայկական Տավրոսից հարավ՝ Տիգրիսի միջին հովտում ընկած տարածքները:
4) Նաիրի պետական կազմավորման տարածքն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները:

52 Նշված պնդումներից ո՞րն է **սխալ**:

1) Մովսես Սարաֆյանն իր ազատագրական ծրագրում առաջարկում էր Հայաստանն ազատագրելուց հետո ստեղծել հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկին նշանակել Հայաստանի թագավոր:
2) Ըստ Շահամիր Շահամիրյանի նախագծի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով, որի թագավորը պետք է ընտրվեր ռուսաց կայսրի կողմից:
3) Հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Խոջաջանյանը պատրաստ էր Հայաստանի ազատագրության համար կտակել իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե այդ ծրագրին հավանություն տար Սիմեոն կաթողիկոսը:
4) Խաչատուր Լազարյանի, Ալեքսանդր Խուդաբաշյանի և Կարապետ Արղությանի մշակած նախագծի համաձայն Հայոց պետության մեջ ընդգրկվելու էին Հին Հայաստանի գրեթե բոլոր նահանգները: :

53 Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ արտացոլում 1990 թ. մայիսի 20-ին Հայաստանում տեղի ունեցած ընտրությունների պատկերը:

1) Ձայների ճնշող մեծամասնություն ստացան ՀՀՇ-ի թեկնածուները:
2) Թույլ տրված խախտումներն առաջացրին բնակչության բուռն դժգոհությունը:
3) Ձայները համարյա հավասարապես բաշխվեցին Հայկոմկուսի և ՀՀՇ-ի թեկնածուների միջև:
4) Դրանք Խորհրդային Հայաստանի պատմության մեջ վերջին միակուսակցական ընտրություններն էին:

54 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. մարդպետություն
2. սահմանապահ կուսակալ
3. արքունի քարտուղարություն
4. բդեշխ

ա) Օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցություններ վարող գործակալություն Կիլիկիայում:
բ) Վաղ ավատատիրության ժամանակաշրջանում արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունյաց սեպուհների դաստիարակությունն իրականացնող գործակալություն:
գ) Վաղ ավատատիրական Հայաստանում երկրի տնտեսական-հարկային վարչությունը, որն իրականացնում էր ճանապարհների, կամուրջների, կառուցումը, պարհակների տնօրինությունը և նման այլ գործառույթներ:
դ) Սահմանակալ նահանգի տերը վաղ ավատատիրական Հայաստանում:
ե) Վանի թագավորության արձանագրություններում հիշատակվող գործակալություն:

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ

55 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. Տրոցկիստական ընդդիմություն
2. «Ուղղափառ մարքսիստներ»
3. «Երեքի դեկլարացիա»
4. «Երեքի» խմբակի՝ «Երեքի հռչակագիրը»

ա) Հայաստանի կոմերիտական կազմակերպության շարքերում գործող տրոցկիստական խումբ:
բ) 1920-ական թթ. ԽՍՀՄ-ում կոմունիստական կուսակցության ներսում ընդհանուրից տարբերվող տեսակետ արտահայտող ընդդիմադիր խումբ:
գ) Հայաստանի կոմկուսում գործող խումբ, որին անդամակցելու համար մեղադրվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը:
դ) Հայաստանում պրոլետարական գրական խմբակի հռչակագիրը՝ գրական առաջին մանիֆեստը, որով պահանջվում էր ամբողջությամբ մերժել նախահեղափոխական գրական ժառանգությունը:
ե) Հայ տրոցկիստների առաջին հրապարակային ելույթը, որը տպագրվեց մամուլում:

1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե